Հաստատված է՝

Հայկական Բժշկական ինստիտուտի

Ռեկտորի 27.08.2019թ.

Թիվ 764/3 հրամանով

Ընդունված՝

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 27.08.2019թ.

թիվ 51 նիստում

ռեկտոր՝ Գ.Հ. Մխոյան

(ստորագրություն)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՀԻՄՆԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԻ

ԵՐԵՎԱՆ 2019 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԽՈՐՀԻԴԻ

1. ՀԲԻ-ի կառավարման բարձրագույն մարմինն հանդիսանում է ինստիտուտի Հիմնադիր խորհուրդը: ՀԲԻ-ի հիմնադիր խորհրդի անդամների թիվը 4 է:
2. **ՀԲԻ-ի Կառավարման մարմիններն են՝**
    1) Հիմնադիր խորհուրդը.
    2) գիտական խորհուրդը.
    3) տնօրենը (այսուհետ՝ ռեկտոր):
3. ՀԲԻ-ի Հիմնադիր խորհրդի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝
    1) ՀԲԻ-ի կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, ՀԲԻ-ի կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ:
    2) Հիմնադիր խորհրդի ազատումը և նոր անդամի ընդունումը, այդ թվում՝ անդամի ժառանգներին (իրավահաջորդներին) փայի փողացման միջոցով.
    3) անդամի հեռացումը (վտարումը) սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում.
    4) ՀԲԻ-ի վերակազմակերպումը.
    5) ՀԲԻ-ի լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.
    6) ՀԲԻ-ի բաժնային ֆոնդի չափի մեծացումը.
    7) ՀԲԻ-ի բաժնային ֆոնդի չափի փոքրացումը.
    8) ՀԲԻ-ի անբաժանելի ֆոնդի ձևավորումը, օգտագործումը, նրա չափի մեծացման կամ փոքրացման մասին որոշման մասին ընդունումը.
    9) Ավանդների գանձման մասին որոշման ընդունումը.
    10) ՀԲԻ-ի նախագահի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
    11) ՀԲԻ-ի վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը
    12) ՀԲԻ-ի աուդիտն իրականացնող անձի հաստատումը
    13) ՀԲԻ-ի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, ինչպես նաև մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը.
    14) ՀԲԻ-ի շահույթների և վնասների բաշխումը
    15) ինստիտուտի ֆոնդերի չափերի և ձևավորման կարգի, նրանց օգտագործման ուղղությունների սահմանումը.
    16) ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը

17) ինստիտուտի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված գործարքներին հավանության տալը, որոնց արժեքը գերազանցում է բաժնային ֆոնդի 1/4-ը.
18) ինստիտուտի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը.
19) գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը.
20) ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

4. ՀԲԻ-ի Հիմնադիր խորհուրդն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև խորհրդի գործունեության ցանկացած այլ հարցով:
5. Հիմնադիր խորհրդի ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերվող հարցերի լուծումը կատարվում է ժողովի նիստում: Ժողովը համարվում է իրավասու, եթե ներկա են Հիմնադիր խորհրդի անդամների ընդհանուր քանակի հիսուն տոկոսից ավելին: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (երբ քննարկվող հարցը պահանջում է բոլոր անդամների միաձայնությունը) ժողովը իրավասու է բոլոր անդամների ներկայության դեպքում:
6. Հիմնադիր խորհրդի ընդհանուր ժողովի կանոնակարգը և քվեարկության կարգը (բաց կամ փակ) որոշվում է Հիմնադիր խորհրդի անդամների ընդհանուր ժողովի կողմից:
7. Հիմնադիր խորհրդի ընթացիկ գործունեության ղեկավարումը իրականացնում է խորհրդի նախագահը, որը ընտրվում է խորհրդի անդամների ընդհանուր ժողովի կողմից՝ խորհրդի անդամների թվից՝ երկու տարի ժամկետով: Խորհուրդի նախագահը լուծում է բոլոր հարցերը, բացի Հիմնադիր խորհրդի անդամների բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից: Խորհրդի նախագահը կազմակերպում է Հիմնադիր խորհրդի անդամների ընդհանուր ժողովի որոշումների կատարումը, հաշվետու է խորհրդի անդամների ընդհանուր ժողովին:
8. Հիմնադիր խորհրդի նախագահը իրավունք ունի առանց լիազորության գործարքներ կատարել ինստիտուտի անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում բաժնային ֆոնդը 25%-ից:
9. Հիմնադիր խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հիմնադիր խորհրդի նիստերն գումարվում են առնվազն տարեկան մեկ անգամ՝ Հիմնադիր խորհրդի նախագահի կողմից: Հիմնադիր խորհուրդի նիստերը կարող են հրավիրվել նաև Հիմնադիր խորհրդի անդամների 1/3 պահանջով՝ Հիմնադիր խորհրդի նախագահի կողմից համապատասխան պահանջը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում: Կոռավարման խորհրդի նիստերն կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմանբ, ինչպես նաև հարցման կարգով: Հիմնադիր խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամներ ձայների մեծամասնությամբ: Հիմնադիր խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ Հիմնադիր խորհրդի

յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Եթե Հիմնադիր խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի գույքային կամ նրա շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

10. Խորհուրդի նիստերն արձանագրվում են:
11. **Հիմնադիր խորհրդի իրավասություններն են՝**
    1) աշխատակարգի հաստատումը.
    2) ռեկտորի ընտրության կանոնակարգի մշակումը, հաստատումը, ընտրության կազմակերպումը, ռեկտորի ընտրության և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
    3) ռեկտորի տարեկան հաշվետվության լսումն ու գնահատումը.
    4) ՀԲի-ի գործունեության ռազմավարական և տարեկան ծրագրերի հաստատումը.
    5) ՀԲԻ-ի կառուցվածքի հաստատումը.
    6) ՀԲԻ-ի հաստիքացուցակի հաստատումը.
    7) ՀԲԻ-ի եկամուտների ու ծախսերի տարեկան նախահաշվի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու ՀԲԻ-ի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը.
    8) ստորաբաժանումների ստեղծման, դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշման ընդունումը.
    9) ՀԲԻ-ի գործունեության, այդ թվում՝ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը:
    10) Հիմնադիր խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
    11) ռեկտորի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանների, հրահանգների և ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչելը.
    12) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.
    13) ՀԲԻ-ի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.
    14) ՀԲԻ-ի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը.
    15) ՀԲԻ-ի գույքի տնօրինման կարգի հաստատումը.